ՆՈՐԿԵՆՏ ԾՐԱԳՐԻ ԸՆԹԱՑՔԸ ՇՊՀ-ՈՒՄ

(5-րդ և 6-րդ փուլեր)

Շիրակի պետական համալսարանում ընթանում են Նորարարությունների մրցակցային հիմնադրամի միջոցով Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող և ՀՀ ԿԳՆ Կրթական ծրագրերի կենտրոն ՇԻԳ-ի կողմից համակարգվող «ՆՈՐԿԵՆՏ» ծրագրի 6-րդ փուլի աշխատանքները:

Նախորդ՝ 5-րդ փուլում կազմակերպվեցին և անցկացվեցին «Հեռաուսուցում» դասընթացի պարապմունքները, որին մասնակցեցին ծրագրի 60 շահառուներ: Դասընթացավար Վահրամ Մուրադյանի կողմից պարապմունքներն անցկացվեցին ինչպես լսարանային, այնպես էլ հեռաուսուցման/էլեկտրոնային ուսուցման համակարգի առանձին տարրերի կիրառմամբ: Մասնակիցները համապատասխան գիտելիքներ ստացան MOODLE համակարգի մասին, ինչպես նաև կարողացան ձեռք բերել դրանից օգտվելու որոշակի կարողություններ ու հմտություններ՝ իրենց հետագա աշխատանքներում կիրառելու համար:

ՆՈՐԿԵՆՏ ծրագրով նախատեսված է, որ վերը նշված 60 շահառուներից 30-ը հետագայում մասնակցելու են «Ներառական կրթության կազմակերպում», իսկ մյուս 30-ը՝ «Կայուն տուրիզմի զարգացում» դասընթացներին:

5-րդ փուլի երկրորդ հատվածում կազմակերպվեցին և անցկացվեցին «Ներառական կրթության կազմակերպում» դասընթացի տեսական ու գործնական պարապմունքները և պրակտիկան: Ի դեպ, դրանց դասավանդման, ուսումնական առաջադրանքների հանձնարարման ու ներկայացման ժամանակ դասընթացավար Սաթենիկ Եղիազարյանի և շահառուների կողմից նույնպես կիրառվեցին հեռաուսուցման/էլեկտրոնային ուսուցման առանձին տարրեր: Այս դասընթացն ավարտվել է, և բոլոր մասնակիցները կարողացել են դրական գնահատական ստանալ թե տեսական ու գործնական պարապմունքներից, և թե պրակտիկայից: Վերջինս անցկացվեց Գյումրու թ.7 դպրոցում, որտեղ իրականացվում է ներառական կրթություն:

Դասընթացի ավարտին անցկացվեց հարցում, որի նպատակն էր պարզել մասնակիցների բավարարվածության աստիճանն ուսումնական նյութերից, դասավանդման մեթոդներից, պրակտիկայի անցկացման անհրաժեշտությունից ու արդյունավետությունից,

ինչպես նաև ծրագրի աշխատակզմի գործունեությունից: Բոլոր հարցերը գնահատվելու էին 5-բալանոց համակարգով, որտեղ 0-ն ամենացածր, իսկ 5-ն՝ ամենաբարձր գնահատականն էր: Վերը նշված բոլոր ոլորտները դասընթացի մասնակիցները գնահատել են հիմնականում 4-5 միավոր, իսկ նրանց դիտարկումների ու առաջարկությունների մեջ նշվել է, որ նախընտրելի կլիներ պրակտիկային ավելի երկար ժամանակահատված հատկացնել: Նրանք նաև կարևորել են հեռաուսուցման, ներառական կրթության գծով վերապատրաստումների անցկացման անհրաժեշտությունը:

2019 թվականի հունվարից սկսվել են ՆՈՐԿԵՆՏ ծրագրի 6-րդ փուլի աշխատանքները: Այս ընթացքում նախատեսվում է կազմակերպել և անցկացնել «Կայուն տուրիզմի զարգացում» դասընթացի տեսական ու գործնական պարապմունքները, ինչպես նաև պրակտիկան: Արդեն ավարտվել է դասընթացի ուսումնական նյութերը մշակող անհատ խորհրդատուների ու սեմինարավարի ընտրության մրցույթը, առավելագույն միավորներ ստացած մասնագետների հետ կնքվել են համապատասխան պայմանագրեր, և շուտով կսկսվեն պարապմունքները:

Այս փուլի ընթացքում՝ փետրվարի 12-ին, Կրթական ծառայությունների կենտրոն ԾԻԳ-ի կողմից անցկացվեց իրականացված աշխատանքների մշտադիտարկում (մոնիտորինգ):

Մշտադիտարկման արդյունքում հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքներն ընդհանուր առմամբ գնահատվեցին բավարար, իսկ փորձագետների կողմից արված դիտարկումներն ու առաջարկությունները հիմնականում առնչվում էին աշխատանքային պլանով նախատեսված որոշ գործողությունների՝ վերջնաժամկետներից կատարված մասնակի շեղումներին ու դրանց իրականացման ժամանակացույցի քննարկմանն ու հաստատմանը:

Այս փուլում նախատեսվում է նաև ձեռք բերել համակարգչային տեխնիկայի, մարզասարքերի ու գրենական պիտույքների վերջին խմբաքանակը և կահավորվել ՇՊՀ լրացուցիչ և շարունակական /ցկյանս/ կրթության կենտրոնը, ինչպես նաև դրա երկու ռեսուրս կենտրոններն ու ծրագրի աշխատասենյակը:

Այս ամենի իրականացումը հնարավորություն կտա, որ բազմազանեցվի ու ընդլայնվի Շիրակի մարզի բնակչությանը մատուցվող կրթական, մարզամշակութային ու խորհրդատվական ծառայությունների շրջանակը, ինչպես նաև լրացուցիչ ու շարունակական դասընթացներ, վերապատրաստումներ անցկացնել աշխատաշուկայի պահանջմունքներից բխող նաև այլ մասնագիտությունների գծով:

Հայերեն (hy) ՀՀ ԿԳՆ ԿԱԻ ՇՊՀ Մուտք

Սոցիալական կայքեր

Ու Շ Ա Դ Ր Ու Թ Յ Ու Ն. Կայքը ստեղծվել է «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի «ՆՈՐԿԵՆՏ» ծրագրի շրջանակներում

Հայերեն (hy) ՀՀ ԿԳՆ ԿԱԻ ՇՊՀ Մուտք

Սոցիալական կայքեր



Ու Շ Ա Դ Ր Ու Թ Յ Ու Ն. Կայքը ստեղծվել է «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի «ՆՈՐԿԵՆՏ» ծրագրի շրջանակներում

ՇԻՐԱԿԻ
SHIRAK STATE UNIVERSITY
ՇԻՐԱԿԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼ
Shirak State University
Ширакский государственный университет
ՇԻՐԱԿԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼ
Ширакский государственный


ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ
ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ
Վերադառնալ դեպի՝ Գլխավոր
Մուտք

JETSTREAM
JDM-5400
JETSTREAM
JETSTREAM

GALAXY

JOEREX

SHIRAK STATE UNIVERSITY
Shirak State University
Ширакский государственный университет
ՇԻՐԱԿԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
Ширакский государственный университет имени М. Налбандяна
Shirak state university



ՇԻՐԱԿԻ ՊԵՏԱԿԱՆ
SHIRAK STATE UNIVERSITY


ՇԻՐԱԿԻ ՊԵՏԱԿԱՆ
SHIRAK STATE UNIVERSITY